ՀՀ-ՈՒՄ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 2015-2021թթ.

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱԿՈԲ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ և ՀԱԱՀ դասախոս
էլփոստ՝ hkhachatr@mail.ru
ՔԵՇԻՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ
Տնտեսագիտության թեկնածու,
ՀԱԱՀ դասախոս
էլփոստ՝ keshishyan@inbox.ru

Սույն հոդվածը նվիրված է ՀՀ-ում սպառողական գների 2015-2021թթ. դինամիկայի վերլուծությանը: Պայմանավորված COVID-19 համավարակով, իսկ հետո նաև արցախյան երկրորդ պատերազմով՝ գների փոփոխությունների վերլուծությունը իրականացվել է ամսական կտրվածքով: Այս դեպքում գների փոփոխությունների վերլուծությունը ընգրկում է 2021թ. հունվար-ապրիլ ամիսները: Վերլուծությունները ցույց են տվել, որ 2021թ. հունվար-ապրիլ ամիսներին սպառողական գները ըստ ամիսների ունեցել են ոչ նշանակալի աճ, իսկ նախորդ տարվա դեկտեմբեր ամսվա կամ նույն ժամանակի հետ համեմատելիս սպառողական գները էականորեն բարձրացել են: Պարենային ապրանքների կազմում 2021թ. ապրիլ ամսին 2020թ. ապրիլ ամսվա համեմատ հացամթերքի գները բարձրացել են 7.6%-ով, կաթնամթերքի (ներառյալ ձու) գները՝ 13.4%-ով, իսկ շաքարի և շաքարավազի գինը՝ 41.0%-ով:

Բանալի բառեր՝ *սպառողական գների ինդեքս, պարենային ապրանքների գների ինդեքս, ոչ պարենային ապրանքների գների ինդեքս, ծառայությունների սակագների ինդեքս, գների ենթաինդեքսներ, COVID-19 համաճարակ, արցախյան երկրորդ պատերազմ:*

Պայմանավորված COVID-19 համավարակով, իսկ հետո նաև արցախյան երկրորդ պատերազմով՝ 2020թ. սկսած մինչև այսօր յուրաքանչյուր ամիս նկատելի են գների բարձրացման միտումներ հատկապես պարենային ապրանքների դեպքում: Սպառողական գների ընդհանուր միտումների բա-

ցահայտման նպատակով նախ վերլուծվել են սպառողական գների 2015-2020թթ. դինամիկան տարեկան, ապա ամսական կտրվածքով 2021 թվականի հունվար-ապրիլ ամիսներին:

Տարեկան կտրվածքով ՀՀ ՎԿ-ն գների ինդեքսները հաշվարկում և հրատարակում է՝

տվյալ տարին նախորդ տարվա նկատմամբ,

տվյալ տարին նախորդ տարվա դեկտեմբեր ամսվա նկատմամբ:

Աղյուսակ 1.

ՀՀ-ում սպառողական գների ինդեքսը 2015-2020թթ. նախորդ տարվա նկատմամբ,% [1,2]:

Տարիներ	Սպառողական գների ինդեքսը	Սպառմամբ ապրանքներ	Պարենային ապրանքներ (ներառյալ ալկոհոլային խմիչքներ և ծխախոտ)	Ոչ պարենային ապրանքներ	Ծառայություններ
2015թ.	103.7	104.1	103.0	105.6	103.0
2016թ.	98.6	97.2	97.0	97.5	101.8
2017թ.	101.0	102.1	104.0	98.2	98.7
2018թ.	102.5	103.2	102.5	104.5	101.2
2019թ.	101.4	101.9	102.1	101.5	100.5
2020թ.	101.2	101.1	101.2	101.0	101.4

Աղյուսակ 1.-ում ներկայացված տվյալներից երևում է, որ 2015-2020թթ. ՀՀ-ում սպառողական գների ընդհանուր ինդեքսը և ենթաինդեքսները ունեցել են նվազման միտումներ: 2020թ.-ին 2015թ.-ի համեմատ սպառողական գների ինդեքսը նվազել է 2.5 տոկոսային կետով, պարենային ապրանքների (ներառյալ ալկոհոլային խմիչքներն ու ծխախոտը)՝ 1.8 տոկոսային կետով, ոչ

պարենային ապրանքների գների ինդեքսը՝ 4.6, ծառայությունների սակագների ինդեքսը՝ 1.6 տոկոսային կետերով:

Ըստ ամիսների և եռամսյակի գների փոփոխությունը ՀՀ ՎԿ-ն հրատարակում է՝

- նախորդ ամսվա նկատմամբ,
- նախորդ տարվա դեկտեմբեր ամսվա նկատմամբ,
- նախորդ տարվա նույն եռամսյակի (ամսվա) նկատմամբ:

Սույն հետազոտությունում ամսական կտրվածքով գների փոփոխությունների վերլուծությունը ընդգկել է 2021թ. հունվար-ապրիլ ամիսները:

Աղյուսակ 2.

ՀՀ-ում սպառողական գների ինդեքսը 2021թ. հունվար-ապրիլ ամիսներին նախորդ ամսվա նկատմամբ,% [3,4]:

Ամիսներ	Սպառողական գների ինդեքս	Պարենային սպառողական ապրանքներ (խմիչքներ և ծխախոտ)	Ոչ պարենային սպառողական ապրանքներ	Ծառայություններ
	Նախորդ ամսվա նկատմամբ			
Հունվար	102.2	104.1	101.7	100.3
Փետրվար	100.6	100.8	100.1	100.1
Մարտ	101.0	101.0	101.6	100.5
Ապրիլ	101.8	102.5	100.7	101.9
	2020թ. դետեմբեր ամսվա նկատմամբ			
Հունվար	102.2	104.1	101.7	100.3
Փետրվար	102.8	104.9	102.7	100.4
Մարտ	103.8	106,0	104.3	100.9
Ապրիլ	107.4	108.6	105.0	101.1

Աղյուսակ 2.-ում ներկայացված տվյալներից երևում է, որ 2021թ.1-ին եռամսյակում յուրաքանչյուր ամիս նախորդ ամսվա նկատմամբ գների բարձրացման միտումները առաջին հայացքից «համեստ» են թվում, սակայն, երբ դիտարկում ենք յուրաքանչյուր ամսվա գների ինդեքսը 2020թ. դեկտեմբերի

համեմատ, ապա պատկերը կտրուկ փոխվում է: 2021թ. մարտին սպառողական գները 2020թ. դեկտեմբերի համեմատ աճել են 3.8%-ով, պարենային ապրանքների գները՝ 6.0%-ով, ոչ պարենային ապրանքների գները՝ 4.3%-ով, իսկ ծառայությունների սակագների ինդեքը՝ 0.9%-ով: 2021թ. ապրիլին սպառողական գները 2020թ. դեկտեմբերի համեմատ աճել են 7.4%-ով, պարենային ապրանքների գները՝ 8.6%-ով, ոչ պարենային ապրանքների գները՝ 5.0%-ով, իսկ ծառայությունների սակագների ինդեքը՝ 1.1%-ով:



Գծապատկեր 1. ՀՀ-ում սպառողական ապրանքների գների փոփոխությունը 2021թ. 1-ին եռամսյակում նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ,% [3]:

Ընդհանուր առմամբ ՀՀ-ում 2021թ. 1-ին եռամսյակում 2020թ.1-ին եռամսյակի համեմատ սպառողական ապրանքների գները աճել են 5.2%-ով, պարենային ապրանքների գները՝ 7.2%-ով, ոչ պարենային ապրանքների գները՝ 6.9%-ով, իսկ ծառայությունների սակագները՝ 1.7%-ով:



Գծապատկեր 2. ՀՀ-ում սպառողական ապրանքների գների փոփոխությունը 2021թ. հունվար-ապրիլը նախորդ տարվա հունվար-ապրիլի,% [4]:

Ընդհանուր առմամբ ՀՀ-ում 2021թ. հունվար-ապրիլ ամիսներին 2020թ.հունվար-ապրիլ ամիսների համեմատ սպառողական ապրանքների գները աճել են 7.2%-ով, պարենային ապրանքների գները՝ 7.6%-ով, ոչ պարենային ապրանքների գները՝ 7.3%-ով, իսկ ծառայությունների սակագները՝ 1.9%-ով:

Սպառողական գների ինդեքսը, հատկապես պարենային գների ինդեքսը իր անմիջական ազդեցությունն է թողնում բնակչության կենսամակարդակի վրա: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ներկայացնենք պարենային որոշ ապրանքների գների փոփոխությունները 2021թ. հունվար-ապրիլ ամիսներին:

Աղյուսակ 3.

ՀՀ-ում պարենային որոշ ապրանքների գների ինդեքսը 2021թ. առաջին եռամսյակում, % [4]:

Պարենային ապրանքներ	2021թ. ապրիլը մարտի նկատմամբ	2021թ. ապրիլը 2020թ. ապրիլի նկատմամբ	2021թ ապրիլը 2020թ. դեկտեմբերի նկատմամբ	2021թ. հունվար-ապրիլը 2020թ. հունվար-ապրիլի նկատմամբ
Հացամթերք, ձավարեղեն	100.5	107.6	102.6	108.6
Տավարի միս	100.6	104.0	102.0	102.2
Կաթնամթերք (ներառյալ ձու)	101.4	113.4	104.9	112.6
Պտուղներ	107.8	110.4	122.0	110.4
Բանջարեղեն	105.3	108.5	127.1	108.1
Շաքար և շաքարավազ	107.5	141.0	110.9	140.8
Ոչ ակոհոլային խմիչքներ	100.6	103.5	103.5	102.8
Ալկոհոլային խմիչքներ և ծխախոտ	101.1	108.8	106.1	109.3

Աղյուսակ 3.-ում ներկայացված տվյալներից երևում է, որ 2021թ.ապրիլին մարտ ամսվա համեմատ որոշ պարենային ապրանքների դեպքում գրանցվել են գների ոչ բարձր աճի տեմպեր, սակայն գների նկատելի բարձրացում գրանցվել են պտուղների (7.8%), բանջարեղենների (5.3%), շաքարավազի (7.5%) դեպքում: Միմյանց հետ համեմատելով 2021թ. ապրիլ ամիսը նախորդ տարվա ապրիլ ամսվա գների ինդեքսները՝ նկատում ենք, որ պարենային ապրանքների գները ունեցել են բարձր աճի տեմպեր. գների բարձր աճով աչքի են ընկնում հացամթերքը՝ 7.6%, կաթնամթերքը՝ 13.4%, պտուղները՝ 10.4%, բանջարեղենը՝ 8.5%, ալկոհոլային խմիչքները և ծխախոտը՝ 8.8%, շաքարը և շաքարավազը՝ 41.0%: Պարենային ապրանքների գների ահագնացող թռիչքային տեմպեր են գրանցվել նաև 2021թ. հունվար-ապրիլ ամիսները 2020թ. հունվար-ապրիլ ամիսների հետ համեմատելիս (աղյուսակ 3): Համեմատվող ժամակահատվածում հացամթերքի գները բարձացել են 8.6%-ով, կաթնամթերքի գները՝ 12.6%-ով, պտուղները՝ 10.4%-ով, բանջարեղենները՝ 8.1%-ով, ալկոհոլային խմիչքները և ծխախոտը՝ 9.3%-ով, իսկ շաքարն ու շաքարավազը՝ 40.8%-ով:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2020», վիճակագրական ժողովածու, ՀՀ ՎԿ, Երևան, 2020, էջ 471-472:
2. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թվականի հունվար-դեկտեմբերին», վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ՎԿ, Երևան, 2021, էջ 67,69:
3. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-մարտին», վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ՎԿ, Երևան 2021, էջ 81-86:
4. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-ապրիլին», վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ՎԿ, Երևան, 2021, էջ.39-40:

THE STATISTICAL ANALYSIS OF PRICE INDEX IN 2015-2021 IN RA

KHACHATRYAN HAKOB
The PHD in Economics, Professor
GSU Lecturer, ANAU
e-mail: hkhachatr@mail.ru
KESHISHYAN GEVORG
The PHD in Economics,
ANAU Lecturer
e-mail: keshishyan@inbox.ru

This article is dedicated to the analysis of the dynamics of price in 2015-2021 in RA. In 2021, the dynamics of the price index has been analyzed per month conditioned by COVID-19 pandemic and the 2-nd Artsakh war. In this case the analysis of price index includes the January-April months in 2021. As the analysis has shown in January-April of 2021, the consumer price index by the months has insignificant growth. In January-April of 2021 comparing with the December of 2020 the consumer price index had significant growth. In April of 2021 comparing with April of 2020 in the part of food products the price of bread and cereals has increased by 7.6% , the price of dairy products (including egg) has increased by 13.4%, the price of sugar has increased by 41.0%.

Keywords: *consumer price index, food price index, non-food products price index, the indices of tariffs for services, sub index of price, COVID-19 pandemic, the 2-nd Artsakh war.*

СТАТИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ ИНДЕКСА ЦЕН В 2015-2021 ГГ. В РА

ХАЧАТРЯН АКОБ
Кандидат экономических наук, доцент
Преподаватель ГГУ,
электронная почта: hkhachatr@mail.ru
КЕШИШЯН ГЕВОРГ
Кандидат экономических наук,
Преподаватель НАУА
электронная почта: keshishyan@inbox.ru

Настоящая статья посвящена анализу динамики цен в 2015-2021 годах в РА. В 2021 году проанализирована динамика индекса цен по месяцам в связи с пандемией COVID-19 и 2-й арцахской войной. В этом случае анализ индекса цен включает январь-апрель 2021 года. В январе-апреле 2021 года по сравнению с декабрем 2020 года индекс потребительских цен значительно вырос. В январе-апреле 2021 года по сравнению с декабрем 2020 года индекс потребительских цен значительно вырос. В апреле 2021 года по сравнению с апрелем 2020 года в части продовольственных товаров цена на хлеб и крупы увеличилась на 7.6%, на молочные продукты (включая яйца) - на 13.4%, на сахар - на 41.0%.

Ключевые слова: *индекс потребительских цен, индекс цен на продовольственные товары, индекс цен на непродовольственные товары, индексы тарифов на услуги, субиндекс цены, COVID-19 пандемия, 2-я арцахская война.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 19.08.2021թ.:
Հոդվածը գրախոսվել է 11.09.2021թ.: